ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №27

«21» 04 2022թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սյունիքի մարզի դատախազ Էդուարդ Քաջիկի Հարությունյանին Գեղարքունիքի մարզի դատախազի պաշտոնում նշանակելու և նույն մարզի դատախազի պարտականությունների կատարումը Մասիս Մելիքսեթի Պողոսյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 18.04.2022թ. N 102-Ա և 103-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Է.Հարությունյանի կողմից՝ Սյունիքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում հանձնում, իսկ Մ.Պողոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Բաղդասարյան Գևորգ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Խալաթյան Գևորգ - Սյունիքի մարզի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Քոչարյան Նարինե - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ

Բաղդասարյան Լևոն - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Կարապետյան Թամարա - Սյունիքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

4. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի մայիսի 20-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**